

եկեղեցիներ ու վանքեր շատ քան ի վերջոյն Տա-
 տառեցին ժողովրդի մէջ կրօնական—բարոյական գա-
 ղափարներն տարածման գործի նպաստելու նպատա-
 կով։ Այդ քանակութիւնը մի մի թեթեւ պահարաններ
 են կրօնական—բարոյական բովանդակութեամբ զըր-
 քոյկներով ու տետրերով որ շրջեցնուած են գիւ-
 ղէ գիւղ և ամէն տեղ մի քանի օր պահելով՝ բա-
 ժանուում են ժողովրդին կարգալու։

— «Յերկ, վեսան»,-ի յառաջ բերած տեղե-
 կութիւններից երևում է որ ուսաց թեմական «բա-
 րողական յանձնաժողովներն» գործը առ հասարակ
 շատ դանդաղ է զարգանում։ Հնայելով առաջնորդ-
 ների յորդորներին՝ «յանձնաժողովների անդամների
 թիւը ոչ միայն չէ աւելանում, այլ և շատ թեմե-
 րում ընդհակառակը նուազում է։ անդամ համար-
 ուողներից շատերը նոյն իսկ իրանց տարեկան անդա-
 մավճարները չեն հատուցանում։

ԲՈՂՈՒՔԱԿԱՆ ՔԱՐՈՉԻՉՆԵՐԸ ՄԱՀՄԵՂԱ-
 ԿԱՆՆԵՐԻ ՄԷՋ։

Արեւելքում գործող բողոքական միսիոնար-
 ների համար առ հասարակ պէտք է այն ու-
 րախալի երևոյթը նկատողութեան առնել,
 որ թէ նոքա և թէ նոցա ուղարկողները
 սկսել են վերջին ժամանակներս աւելի զգու-
 շութեամբ և պատկառանքով վերաբերուիլ
 դէպի արեւելեան եկեղեցիները, անցելով
 գործած սխալները հեռուցեալէ ճանաչել և
 զգալ, որ հնադարեան քրիստոնեաների մէջ
 մի նոր դաւանութեան քարոզելը առանձին
 աստուածահաճոյ գործ չէ, որ քրիստոնէու-
 թեան գործին ուղիղ մտօք այն ժամանակ
 միայն ծառայած կլինին, երբ ընդհակառակն
 կաշխատեն արեւելեան եկեղեցիներին նպաս-
 տել իրենց ինքնուրոյնութիւնը պահպանելու
 և ներքուստ զօրանալով գործելու ոչ քրիս-
 տոնեայ հարեանների վերայ այն ազդեցու-
 թիւնը, ինչ որ հեռու աշխարհներից եկած
 մարդիկ գործել չեն կարող։ Այսպիսի հայ-
 եացքի ջերմ պաշտպաններից մէկն է գեր-
 մանացի պատոր Ֆարէրը։ Լինելով գլխաւոր
 օգնականը մեծանուն աստուածաբան և եր-
 րայագէտ Գելիչի, որ նոր կտակարանը եր-

բայերէն լեզուով թարգմանել է և հրէանե-
 րի մէջ քրիստոնէութիւն տարածելու գոր-
 ծի համար շատ աշխատանք թափել՝ Ֆարէր
 նորա մահաց յետոյ սկսեց աւելի մահմետա-
 կանների վերայ ուշադրութիւն դարձնել և
 գործունէութեան կենդրոնավայրերի հետ
 ծանօթանալու նպատակով 3 տարի առաջ
 մի ճանապարհորդութիւն արաւ դէպի Պարս-
 կաստան։ Այստեղ ծանօթացաւ նա հայ ժո-
 ղովրդի հետ և իւր հրատարակութիւննե-
 րի մէջ մեծ գովեստով էր խօսում հայերի
 մասին, ջատագովում էր Հայոց եկեղեցու մեծ
 նշանակութիւնը՝ արեւելքում քրիստոնէու-
 թիւն պահպանելու և տարածելու գործի
 համար։

Նորա ճանապարհորդութեան հետեւան-
 քըն այն եղաւ, որ շուտով երկու երիտա-
 սարդ աստուածաբաններ՝ Դր. Յերվիկ և
 կանդիտատ Կէօցլէ, Պարսկաստան ուղարկ-
 ուեցան մահմետականների մէջ քրիստոնէու-
 թիւն քարոզելու նպատակով։ Արջինս իմ
 ուսանողութեան ընկերներից և ծանօթնե-
 րից է և իմ Տիւրքիզէնում գտնուած ժա-
 մանակի երկու տարի առաջ, քննութիւն էր
 բռնում համալսարանում։ Առանդուն, ընդու-
 նակի հմուտ և յառաջագէտ իւր մասնագի-
 տութեան մէջ՝ ազատ Եւրոպայի զաւակը,
 զեռ կեանքի հանդրը չվայելած, արհամար-
 հելով իւր առջև բաց փայլուն ասպարէզ-
 ները և ամէն վտանգ աչքի տակ առնելով,
 թողնում է տուն ու տեղ, թողնում է սերտ
 սիրով իւր հետ կապուած, իւր նշանած աղջ-
 կան և գնում է մի օտար աշխարհ, բոլորո-
 վին անմշակ տատասկոտ հողի վերայ սիրոյ
 և ճշմարտութեան սերմերը ցանելու։ Նա
 մանկութենէ միսիոնար լինելու համար չէր
 կրթուած, որ այդ գործի վերայ իբրև իւր
 ճակատագրի, իւր կեանքի անհրաժեշտ պայ-
 մանի վերայ նայէր։ Առանոյ լինելով նա ա-
 մենաազատ դուարձալի օրեր էր անցրել, լսել
 էր դասախօսութիւններ ամենաազատամիտ
 ուսուցչապետների մօտ, ծանօթացել իւր
 ժամանակի գիտութեան այն չափով, ինչ

չափով մատչելի է այդ մի բարձրագոյն ուսումն ստացած, աշխատասէր երիտասարդի: Մոլեռանգ լինել նա չէր կարող. ո՛չ շահի, ո՛չ փառասիրութեան զգացումը նորան մղել կարող էր. գերմանացիք ամերիկացիներ չեն, այսպիսի նպատակների համար նաքահարիւր հազարներ չեն ծախսում և առատ չեն վարձատրում միսիոնարներին և կեանքի ամէն տեսակ դիւրութիւններ տալիս նոցա: Ամենամաքուր քրիստոնէական սէրը և զուտ գաղափարական ձգտումը միայն նորան առաջնորդել կարող էին և ինչպէս այժմ ցաւ ի սիրտ լսում ենք՝ նա զո՛չ է գնացել մատաղ հասակում իւր գաղափարին:

Պատոր Զարէր մի թուուցիկ թերթով յայտնում է, որ միսիոնար Քրիստիան Աէօցլէն ներկայ թուի վետր. 24 մարտ 8 - ին կնքել է իւր մահականացուն Քալթէզից դէպի Արմիա տանող ճանապարհի վերայ: Նա յառաջ է բերում Աէօցլէի նամակներից հատուածներ, ուր նկարագրուած է, թէ ինչպէս վերջինս բանտերն էր այցելում, իւր ձեռքով ինամուճ գեղեր և կենսական պիտոյքներ հասցնում ամենաթշուառ բանտարկեալներին: Վերջին նամակում նա պատմում է, որ իւր և իւր ընկերոջ գործունէութեան լուրը Արեգակնափաղ Շահի ականջն է հասել և սա Աէօցլէի «Քրիստոս և Մուհամէդ» բրոշիւրն ու Զարէրի մի քանի թղթերը պարսկերէն թարգմանել տալով և կարգալուի հրամայել է մի ամսուայ ընթացքում հեռացնել միսիոնարներին Պարսից սահմաններից և այդ հրամանը գերմանական գեսպանի միջոցով յայտնել է տուել նոցա: Զմրան ցուրտ եղանակին ճանապարհորդութեան դժուարութիւններից յառաջ է եկել երեւի երիտասարդ քարոզչի հիւանդութիւնը և մարտիրոսական մահը: Զարէր նորա յիշատակը յաւերժացնելու համար մտադրութիւն է յայտնում.

- 1) տպել տալ նորա «Քրիստոս և Մուհամէդ» բրոշիւրից հարիւր հազար օրինակ և ցրուել.
- 2) մի մատուռ շինել տալ նորա գերեզմանի մօտ տեղացի քրիստոնեաների համար.
- 3) հը-

րատարակել նորա ճանապարհորդական նամակները՝ Պարսկաստանում նորա հանած լուսանկարներով մէկ տեղ:

«Սպասելով որ ժամանակը գայ, ասում է Զարէր, երբ Պարսկաստանը կբացուի կրկին մահճետականներին քրիստոնէութիւն քարոզողների առաջ, մենք ձեռնառու կլինինք մեր կարողութեան չափով Պարսկաստանում գրունուած Ասորոց և Հայոց խաչակիր եկեղեցիներին, առանց նոցա պատմական ինքնուրոյնութեանը վնասելու, ինչպէս այդ յաճախարել են դժբաղդարար Պրեսրիտերեան միսիոնարները»: Մեզ յայտնի չէ, թէ ինչ միջոցներով մտածում է նա օգնել արևելեան եկեղեցիներին. գիտենք միայն, որ նորա մօտ կան չափահաս հայ և ասորի տղաներ, որոնք գերմանական կրթութիւն են ստանում, և որ նա պաշտպանում է Գերմանիայում հայ ուսանողների նպատելու գաղափարը, որպէս զի կրթութիւն ստանալուց յետոյ նաքա գործեն, անկախ իրենց սեփական եկեղեցու և ժողովրդի սպասաւորութեան համար:

Նորա ասելով չորս երիտասարդ ասուուածաբաններ պատրաստ են արդէն հանգուցեալ Աէօցլէի օրինակին հետեւելու և մահճետականների մէջ քարոզելու և նա մօտ օրերս պէտք է Երևան եկած լինէր միւս միսիոնար Գր. Յերվիկի հետ խորհրդակցելու, թէ ուր հարկաւոր կլինի տեղափոխել այժմ իրենց գործունէութիւնը:

Միևնոյն ժամանակ նա ջանք է գործ գնում մահճետականութեան այս միսիոնը հիթանոսների մէջ գործող միսիոնարական ընկերութիւնների մի ճիւղը դարձնել, ուշադրութիւն հրաւիրելով այն հանգամանքի վերայ, թէ ի՞նչպէս մի քանի երկրներում օրէցօր առաջ է գնում մահճետականութիւնը ի վնաս քրիստոնէութեան և թէ ի՞նչպէս նա դարերի ընթացքում ամբողջ երկիրներ խլել է քրիստոնեաների ձեռքից, անապատ դարձրել և պահում է գեռ ընդարմացած իւր անտանելի լուծի ներքոյ: